«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր 2021թ.

Դեկտեմբեր, 2021թ.

- Ֆինանսական օժանդակություն Արցախի «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

- Ֆինանսական օժանդակություն Շուշիից տեղահանված ընտանիքի՝ կացարան ձեռք բերելու համար:

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում ֆինանսական օժանդակություն 10 շաահառուի:

- Ֆինանսական օժանդակություն Վարդուհի Դավթյանի հեղինակած «Վահան Թէքէեան. Յոդուածների ժողովածու» գրքի տպագրությանը:

Նոյեմբեր, 2021թ.

- «Անվճար դասագրքեր 2021/2022» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 154 անապահով աշակերտներին 2,149 դասագրքի տրամադրում:

Հոկտեմբեր, 2021թ.

- Օժանդակություն Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության 2019-20թթ. ամփոփիչ ձեռնարկի կազմակերպմանը:

Սեպտեմբեր, 2021թ.

- Օժանդակություն պատմաբան եւ քաղաքագետ Արմեն Այվազյանի «Հայ զինվորականության պատվո վարքականոնը» գրքի շնորհանդեսի կազմակերպմանը:

- Օժանդակություն բանաստեղծ Թադէոս Եսայեանի «Պարզ ու տաքուկ բառերով» բանաստեղծությունների հատորի շնորհահանդես-գինեձոնի կազմակերպմանը:

Օգոստոս, 2021թ.

- Օժանդակություն Թեքեյան մշակութային միության կողմից կազմակերպված «Ձնհալն արվեստում» ֆիլմի ցուցադրությանը:

Հուլիս, 2021թ.

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում ֆինանսական օժանդակություն 1 շաահառուի:

Հունիս, 2021թ.

- Օժանդակություն Բերձորի Վ. Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտների «Վերջին դասին», որը կազմակերպել էր «Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպությունը՝ դպրոցի տնօրինության հետ:

Մայիս, 2021թ.

- «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի եւ բարերարների աջակցության շնորհիվ Գյումրու Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցի համակարգչային կաբինետը համալրվեց 8 նոր համակարգիչներով:

Ապրիլ, 2021թ.

- Օժանդակություն Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի 44-օրյա պատերազմի հետեւանքով տեղահանված ուսուցիչների, աշակերտների ու ծնողների հանդիպմանը Թեքեյան կենտրոնում:

Մարտ, 2021թ.

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում՝ կենցաղային տեխնիկայի, կահույքի եւ այլ պարագաների տրամադրում Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի զոհված վեց եւ վիրավոր երեք շրջանավարտների ընտանիքներին:

Փետրվար, 2021թ.

- Սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության պարագաների տրամադրում Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի աշակերտների ընտանիքներին /«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի II փուլ՝ տեղահանված 61 ընտանիք/:

- Ֆինանսական օժանդակություն Հայաստանում հաստատված երիտասարդ ընտանիքի՝ բնակարան ձեռք բերելու համար:

«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2020

COVID-19 պատճառով
չեն իրականացվել ԹԿՀ ամենամյա կրթական, մշակութային եւ այլ ծրագրեր

Դեկտեմբեր, 2020թ.

- Սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության պարագաների տրամադրում Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի աշակերտների ընտանիքներին /տեղահանված 51 ընտանիք/:
- Բուժ. զննման եւ դեղորայքի ապահովում արցախցի Գ.Ավանեսյանի համար:

Նոյեմբեր, 2020թ.

- Ֆինանսական օժանդակություն Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի աշխատակազմին՝ 41 շահառու:
- «Անվճար դասագրքեր 2020/2021» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 170 անապահով աշակերտներին 2,400 դասագրքի տրամադրում:
- Մարդասիրական ծրագիր՝ «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին»: 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի ապաստարաններում ժամանակավոր պատսպարված քաղաքացիական բնակչությանը սննդամթերքի, հագուստի եւ առաջին անհրաժեշտության պարագաների տրամադրում: Ծրագիր երեք փուլով՝ շուրջ 450 անձի համար:
- Լիլիթ Մկրտչյանի «Մայլից մայլա» գրքի տպագրության հովանավորում:
- Ֆինանսական օժանդակություն արցախցիներին՝ 7 շահառու:

Հոկտեմբեր, 2020թ.

- Ֆինանսական օժանդակություն արցախցիներին՝ 8 շահառու:

Փետրվար, 2020թ.

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Հունվար – դեկտեմբեր, 2020թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ:

«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2019

Դեկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն Սուքիաս Թորոսյանի 60-ամյակի առթիվ Թեքեյան կենտրոնում կայացած հեղինակի երգիծանկարների ցուցահանդեսին եւ «Փոքր երկրի մեծ իրադարձությունները» երգիծանկարների նորատիպ ժողովածուի շնորհանդեսին:

Նոյեմբեր, 2019թ.

- «Անվճար դասագրքեր 2019/2020» ծրագրի շրջանակում Ստեփանավանի, Գյումրիի, Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 141 անապահով աշակերտներին 2,009 դասագրքի տրամադրում:

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի տպագրություն:

Հոկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն Արշակ Չոպանյան ինստիտուտի կողմից կազմակերպված քաղաքական գիտությունների դոկտոր Քերոլայն Գալասթերոսի հեղինակած «Դեպի նոր Յալթա» գրքի շնորհանդեսին:

Սեպտեմբեր, 2019թ.

- Ֆինանսական օժանդակություն Ստեփանակերտի «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին եւ Երեւանի «Աջակցություն վիրավոր զինվորներին եւ զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ-ին:

- Հանդիպում-քննարկում «Հայոց ցեղասպանություն. Նախերգանք եւ հետգրություն. հաղորդումներ ամերիկյան մամուլում» 10 հատորանոց անգլերեն մատենաշարի համահեղինակ, ավստրալահայ գործիչ Արա Քեթիպեանի հետ:

- «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի հիմնադիր մարմին Լոնդոնի Թեքեյան Խնամակալ Մարմնի 40-ամյա հոբելյանը Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Օգոստոս, 2019թ.

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի շնորհանդես:

- «Ամառային ճամբար» ծրագրի տասներորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 71 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հունիս, 2019թ.

- Սպիտակի աղետալի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ ռուս լուսանկարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, լեռնային փրկարար, միջազգային կարգի սպորտի վարպետ Եվգենի Ժիլյաեւի անհատական ցուցահանդեսը՝ «Սպիտակ. 5 րոպե լռություն» խորագրով:

Ապրիլ, 2019թ.

- Լիբանանի «Ծաղիկ» գրական ազգային շաբաթաթերթի հետ համատեղ մշակութային երեկո՝ նվիրված մեծն Կոմիտասի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին:

- Լիբանանի «Ծաղիկ» գրական ազգային շաբաթաթերթի հետ համատեղ գրական-երաժշտական երեկո՝ նվիրված հայ մեծ գրողներ Լեւոն Շանթի եւ Երվանդ Օտյանի 150-ամյակներին:

- «Թեքեյանական 9-րդ օլիմպիադա» գիտելիքների ամենամյա մրցույթ մաթեմատիկա, անգլերեն, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից: Մասնակիցներ՝ 85 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Արցախի՝ Բերձորի, Վ. Թեքեյանի անվան դպրոցներից, ինչպես նաեւ Հայաստանի սիրիահայ համայնքից: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի տպագրություն:

Մարտ, 2019թ.

- Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում 2 դասասենյակների վերանորոգում:

Հունվար, 2019թ.

- PhotoPodium.com կայքի հետ համատեղ՝ «B & W» /Black & White/ միջազգային լուսանկարչական ցուցահանդեսը:

Հունվար – դեկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ: